ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » Նոյեմբերի 2016 թվականի N 25

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 09 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել թիվ 09 արտահերթ նիստի օրակարգը

1) Սիս համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանելու մասին:
2)Սիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակ ները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3) Սիս համայնքի տարածքում 2017թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
4) 2017թ-ի համար Սիսի ՀՈԱԿ <<Անուշիկ>> մսուր մանկապարտեզի ծնողական գումար, վարձավճար սահմանելու մասին:

Ավագանու անդամներ

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Բեգունց		
Գ. Առաքելյան		
Ա. Մարգարյան		
Ռ. Աթասյան		
Ե.Լազգիյան		
Ա. Խաչատուրյան		
Կ. Քիշմիրյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2016 թ. Նոյեմբերի 18
գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » Նոյեմբերի 2016 թվականի N 26

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, `*Համայնքի ավագանին որոշում է*`

Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել ամսական 200000 դրամ (երկու հարյուր հազար դրամ):

Ավագանու անդամներ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Բեգունց
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ա. Խաչատուրյան
Ա. Մարգարյան
Ռ. Աթայան
Կ. Քիշմիրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2016 թ. Նոյեմբերի 18
գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18» Նոյեմբերի 2016 թվականի N 27

ՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ- ՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի դրույթներով, *Համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել ՀՀ Արարատի մարզի Սիսի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները,աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1, հավելված 2, հավելված 3:

Կից ներկայացվում է հավելված 1, հավելված 2, հավելված 3:

Ավագանու անդամներ՝

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Բեգունց		
Գ. Առաքելյան		
Ե.Լազգիյան		
Ա. Խաչատուրյան		
Ա. Մարգարյան		
Ռ. Աթասյան		
Կ. Քիշմիրյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2016 թ. Նոյեմբերի 18
գ. Սիս

Հավելված 1
Սիս գյուղական համայնքի ավագանու
2016 թ-ի նոյեմբերի 18 -ի թիվ 27 որոշման

Սիս համայնքի ղեկավարի վարձատրության չափը, Սիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱ-ՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Համայնքի ղեկավար		200000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	145000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Համայնքապետարանի աշխատակազմ քարտուղար /1.2-1/	1	128000
Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	126000
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	96000
Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	94000
Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	93000
Տեխսպասարկման անձնակազմ		
Գործավար	1	78000
Վարորդ	1	77751
Պահակ	1	83000
Աղբահանող բանվոր	1	105000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

Հավելված 2
Սիս գյուղական համայնքի ավագանու
2016 թ-ի նոյեմբերի 18 -ի թիվ 27 որոշման

Համայնքային ենթակայության «Անուշիկ» մ/մանկապարտեզի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ - 8
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափերը / ՀՀ դրամ /
Մանկապարտեզի տնօրեն	1 դրույք	150500
Մանկապարտեզի դաստիարակ	1,25 դրույք	181875
Մանկապարտեզի հաշվապահ	1 դրույք	72751
Մանկապարտեզի դայակ	1 դրույք	72751
Մանկապարտեզի խոհարար	1 դրույք	72751
Մանկ.երաժշտական ուսուցիչ	0.25 դրույք	72751
Մանկապարտեզի պահակ	1 դրույք	78000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

Հավելված 3
Սիս գյուղական համայնքի ավագանու
2016 թ-ի նոյեմբերի 18 -ի թիվ 27 որոշման

Համայնքային ենթակայության «Սիս ԲԱԿ» ՀՈԱԿ հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը - 5
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԸ	ԶԲԱՂԵՑՐԱԾ	Պաշտոնային Դրույքաչափերը ՀՀ դրամ
Տնօրեն	0,5	0,5	72 751
Ընտանեկան բժիշկ	1,0	1,0	96 570
Ընտանեկան բուժքույր	1,0	1,0	90 167
Հաշվապահ	1,0	1,0	77 904
Լաբորանտ	0,5	0,5	38 952
ԸՆԴԱՄԵՆԸ	4,0	4,0	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<18>> Նոյեմբերի 2016 թվականի N 28-Ն

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 Թ-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ հոդվածների և <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է***՝

Սահմանել Սիս համայնքում տեղական տուրքերի 2017 թ-ի համար հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝
   հիմնական օբյեկտների համար՝
   ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ---------- 7500 դրամ.
   բ) սույն կետի ա/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
   բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - ---------- 15000 դրամ.
   բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ----------25 000 դրամ.
   բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ----------35 000 դրամ.
   բդ) 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ---------- 100000 դրամ
   ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
   գ) մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ---------- 1000 դրամ,
   դ) 20 և ավելի քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝---------- 2500 դրամ
2. Սիս համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է ---------- 1500 դրամ
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Սիս համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է--2500 դրամ:
4. Սիս համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. Մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -5000 դրամ,
բ.26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -6500 դրամ,
գ.51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -10000 դրամ,
դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -12500 դրամ,
ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -22500 դրամ,
զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -50000 դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. Մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -5000 դրամ,
բ.26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -6500դրամ,
գ.51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -10000 դրամ,
դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -12500 դրամ,
ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -22500 դրամ,

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -50000 դրամ,

5. Սիս համայնքի վարչական տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար, 1 քմ-ի համար սահմանվում է ---------- - 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային

գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է ---------- 150 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ ----------30000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա.Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝ 2500 դրամ

բ. 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝ 5000 դրամ

գ.51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝ 7500 դրամ

դ. 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝10000 դրամ

ե. 201ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝15000 դրամ

զ. 501և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝25000 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա.Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝500 դրամ

բ. 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝1000 դրամ

գ.51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝2000 դրամ

դ. 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝4000 դրամ

ե. 201ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝7500 դրամ

զ. 501և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սնդի օբյեկտի համար՝12500 դրամ

5.1.Սիս համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ յուրաքանչյուր տարվա թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ------ 50000 դրամ:

6. Սիս համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ ----------40 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ----------50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ ----------300 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ ----------750 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ ----------300 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ ----------125 000 դրամ:

7. Սիս համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ

տեղադրելու թույլտվության համար մեկ քմ-իտեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------1500 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------2500 դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ ----------1000 դրամ.
դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ ----------700 դրամ:
ե) Սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:
7.1 Սիս համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1 քմ-ի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար սահմանված տուրքի 25 %–ի չափով:
7.2 Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբախշել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թուլատրության համար սահմանված տուրքի 10 % ը այդ գովազդի մակերեսին համապատասխան:>>

8. Սիս համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ----------1 000 դրամ:
9. Սիս համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել---------- 5 000 դրամ:
10. Հայաստանի Հանրապետության Սիս համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել ----------50 000 դրամ:
11. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանել.
1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 ՀՀ դրամ:
2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 ՀՀ դրամ:
3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 ՀՀ դրամ:
4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 ՀՀ դրամ:

Սահմանել Սիս համայնքի վարչական տարածքում տեղական վճարների 2016 թ. հետևյալ դրույքաչափերը.
12. Սիս համայնքի վարչական տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
սահմանվում է՝---------- 2000 դրամ
13. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
սահմանվում է՝---------- 3000 դրամ
14. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար
սահմանել՝---------- 2000 դրամ:

15. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց աղբահանության տեղական վճարը սահմանվում է յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական ----------5 դրամ: `

16. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել ----------2000 դրամ:

-- Սիս համայնքի վարչական տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:
-- 2017 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:
--<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել է 0,5 գործակցի կիրառմամբ:
-- Տեղական տուրքերը և վճարները ճիշտ հաշվակելու ժամանակին գանձելու պատասխանատվությունը դնել կրտսեր խմբի 1-ին կարգի մասնագետի վրա:
-- Տեղական տուրքերը և վճարները հաշվակելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Ավագանու անդամներ՝

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Բեգունց		
Գ. Առաքելյան		
Ե.Լազգիյան		
Ա. Խաչատուրյան		
Ա. Մարգարյան		
Ռ. Աթասյան		
Կ. Քիշմիրյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2016 թ. Նոյեմբերի 18
q. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<18>> Նոյեմբերի 2016 թվականի N 29 -Ն

2017 Թ-Ի ՀԱՄԱՐ ՀՈԱԿ <<ԱՆՈՒՇԻԿ >> Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ , ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Սիս համայնքի <<Անուշիկ >> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ծնողական գումարի վարձավճարի չափը 2017թ-ի համար սահմանել ամսական 4000 դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ա. Բեգունց		
Գ. Առաքելյան		
Ե.Լազգիյան		
Ա. Խաչատուրյան		
Ա. Մարգարյան		
Ռ. Աթասյան		
Կ. Քիշմիրյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2016 թ. Նոյեմբերի 18
գ. Սիս